https://www.aljazeera.com/news/2020/10/10/armenia-azerbaijan-agree-ceasefire-from-midnight-lavrov

Armenia, Azerbaijan accuse each other of violating ceasefire

Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց մեղադրում են հրադադարի ռեժիմը խախտելու մեջ

Հակառակորդները միմյանց մեղադրում են վիճակահարույց ԼՂ-ում զինադադարը խախտելու մեջ՝ վերջինիս ուժի մեջ մտնելուց մի քանի րոպե անց.

Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց մեղադրում են վիճակահարույց ԼՂ-ում հրադադարի պայմանները արագորեն խախտելու մեջ՝ բարձրացնելով այն հարցը, թե որքանով է նշանակալից Ռուսաստանի միջնորդությամբ կնքված զինադադարը:

Նախագահ Վ.Պուտինի կողմից քարոզվող մարաթոնյան բանակցություններից ձեռք բերված հրադադարի նպատակը մարտերը դադարեցնելն էր՝ թույլ տալով ԼՂ-ում գտնվող հայկական ու ադրբեջանական ուժերին փոխանակել գերիներին ու պատերազմում զոհվածներին:

Սակայն շաբաթ կեսօրից (12:00) հրադադարի ուժի մեջ մտնելուց մի քանի րոպե անց երկու կողմերն էլ միմյանց մեղադրեցին այն խախտելու մեջ:

ՀՀ ՊՆ-ը Ադրբեջանին մեղադրեց Հայաստանի ներսում բնակավայր հրթիռակոծելու մեջ, մինչդեռ ԼՂ հայկական ուժերը պնդում էին, որ արբեջանական ուժերը սկսել են նոր հարձակում՝ զինադադարի ուժի մեջ մտնելուց հինգ րոպե անց:

Ադրբեջանը հայտարարել է, որ վիճակահարույց շրջանում հակառակորդի ուժերը ռմբակոծել են Ադրբեջանի տարածքը: Երկու կողմերն էլ անընդհատ հերքում են ռազմական գործողությունների մասին միմյանց հայտարարությունները:

Շաբաթ օրը՝ AFP լրատվական գործակալությունը հաղորդեց, որ տեղական ժամանակով ժամը 23:30-ին ԼՂ մայրաքաղաք Ստեփանակերտում յոթ ուժեղ պայթյուն է որոտացել:

Ազդանշանները անմիջապես հնչեցին՝ նախազգուշացնելով բնակիչներին պատսպարվել նկուղներում և անվտանգ վայրերում։

Միջազգային իրավունքի համաձայն, ԼՂ համարվում է Ադրբեջանի մաս։

Սակայն էթնիկ հայերը, ովքեր կազմում են բնակչության ճնշող մեծամասնությունը, մերժում են ադրբեջանական իշխանությունը և ղեկավարում են տարածաշրջանը Հայաստանի աջակցությամբ՝ 1991-ականների ավերիչ պատերազմի ու Խորհրդային Միության փլուզումից հետո։

Շաբաթ օրը Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգե յԼավրովը, ով միջնորդեց Մոսկվայում հրադադարի բանակցություններին, հայտարարության մեջ նշել է, որ զինադադարը կնքվել է հումանիտար նկատառումներից ելնելով։

Նա ասաց, որ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն կօգնի զինադադարի գործին։

«Հրադադարի պահպանման հատուկ պայմանները դեռ պետք է համաձայնեցվեն», - ասաց Լավրովը, նշելով, որ երկու կողմերը համաձայնության են եկել նաև բանակցությունների մեջ, որոնք, ըստ նրա, պետք է անցկացվեն Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի հովանու ներքո։

Սակայն շաբաթ օրը ավելի վաղ Ստեփանակարտից հաղորդող Ալ Ջազիրայի Բեռնար Սմիթը ասաց, որ հրադադարի ռեժիմը խախտվել է։ «Ինչ մակարդակի կամ աստիճանի, միանգամից պարզ չէ»։

Միևնույն ժամանակ, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Ռուսաստանի ՌԲԿ լրատվական գործակալությանը հայտնեց, որ պատերազմող կողմերն այժմ զբաղվում են քաղաքական կարգավորում գտնելու փորձով, բայց ենթադրեց, որ առջևում հետագա մարտեր կլինեն։

«Մենք կգնանք մինչև վերջ և կստանանք այն, ինչ իրավամբ պատկանում է մեզ», - ասաց նա։

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը նույնպես ասել է, որ «մարդասիրական հրադադարը» կտևի այնքան ժամանակ, քանի դեռ Կարմիր Խաչին անհրաժեշտ կլինի մահացածների փոխանակումը կազմակերպելու համար։

Ելույթ ունենալով Բաքվում կայացած ճեպազրույցում ՝ նա դժգոհեց, որ լեռնային տարածաշրջանում առկա ստատուս քվոն չի սազում իր երկրին, և որ Ադրբեջանը հույս ուներ և ակնկալում էր ժամանակին վերահսկել ավելի շատ տարածքներ:

Ալ Ջազիրայի հաղորդավար Սինեմ Քոսեռոլուն, ադրբեջանական Թարթառից հաղորդելով, ասաց, որ հրադադարի ռեժիմը «նույնպես չի ողջունվել ադրբեջանական ժողովրդի կողմից»:

«Նրանք հավատում են, որ 30 տարի անց ... առաջին անգամ են նրանք գերակշռում: Նրանք ունեն ռազմական ուժ ավելի հզոր զենքով: Նրանք կարծում են, որ երկարատև զինադադարը կամ երկարաժամկետ հրադադարը միայն կօգնեն հայերին ամրապնդել իրենց դիրքերը», - ասաց նա:

Միևնույն ժամանակ, Իրանի նախագահ Հասան Ռոհանին և նրա ռուսաստանցի պաշտոնակիցը շաբաթ օրը հեռախոսազրույցում քննարկել են Լեռնային Ղարաբաղում վերջին զարգացումները:

Ռուհանին ողջունեց հրադադարի ռեժիմը և ասաց, որ Իրանը շարունակում է պատրաստ լինել խաղաղ կարգավորման գործընթացին նպաստելու հարցում, բայց կրկնեց մտահոգությունները օտարերկրյա վարձանների տեղակայման մասին:

«Հակամարտության մեջ ահաբեկիչների ներկայությունը կարող է վտանգավոր լինել Իրանի և Ռուսաստանի, և ամբողջ տարածաշրջանի համար», - ասել է Ռուհանին, հաղորդում է Իրանի նախագահի կայքը:

Մյուս կողմից, Պուտինը, հաղորդելով Ռուհանին, տեղեկացրեց հակամարտությունը լուծելու Ռուսաստանի ջանքերի մասին և ասաց, որ հասկանում է իրանական մտահոգությունները:

«Բոլոր հարևան երկրները պետք է փորձեն վերջ տալ պատերազմին և արյունահեղությանը և ձգտեն հակամարտությունների լուծմանը բանակցությունների միջոցով», - մեջբերում է նա:

Թարգմանությունը՝ Անժելա Գասպարյանի, Անի Մարգարյանի

Ղեկավար՝ Արմենուհի Ավագյան